

## ՄԻՔԱՅԵԼ ՄԻԱՆՍԱՐՅԱՆՅԻ ՀԱՐՑԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

19-րդ դարի 2-րդ կեսի հայ հասարակական, մշակութային գործիչ Միքայել Միանսարյանցն իր «Քնար Հայկական» (Մ. Պետերբուրգ, 1868) ժողովածուի «Վերջաբանություն» բաժնում գետեղած «Մտածությունք ազգային լուսավորութեան մասին» հոդվածում ներկայացրել է մի ծրագիր հարցաբան, որը հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի բազմաբնույթ կողմերի, մտավոր, մշակութային, բարոյափոխության և անհատական առանձնահատկությունների համալիր հետազոտության վերջ է։ Այնտեղ ներկայացվում է հայ ժողովրդի ու նրա մշակույթի վերածնության գաղափարը։ Հարցերի պատասխանները, ըստ Մ. Միանսարյանցի, հնարավորություն կընձեռեն հետազոտողներին ազգային լուսավորության, քաղաքակրթության, հայ ժողովրդի համախումբ կեցության առաջնահերթ խնդիրները քննել ու վերլուծել մշակութաբանական առավել լայն տեսադաշտի վրա։ Հայ ժողովրդի հոգևոր ու նյութական մշակութային արժեքների վերահաստատման, վերագնահատման նկատմամբ Միանսարյանցի մտահոգությունները բխում են, անշուշտ, ժամանակի քաղաքական, հասարակական կյանքի հրատապ խնդիրներից ու պահանջներից։ Ապրելով Մ. Պետերբուրգում՝ Մ. Միանսարյանցը ուշի-ուշով հետևել է մայրաքաղաքի մշակութային, քաղաքական, հասարակական անցողաբանական, բազմակողմանի դիտարկել կայսերական Ռուսաստանի հարադիպիտի դիրքորոշումներն իր տիրապետության ներքո գտնվող ժողովուրդների նկատմամբ։ 19-րդ դարի երկրորդ կեսին կայսերական Ռուսաստանի առաջադիր խնդիրներից էր ի ստույգ ծանոթանալ իր տիրապետության տակ ապրող ժողովուրդների պատմական անցյալին, կյանքին ու կենցաղին, սովորություններին, ծեսերին, վարք ու բարքին, քաղաքական նկատումներին։ Վերոհիշյալ խնդիրները տեղ են գտել 1846 թ. ստեղծված «Ռուսական աշխարհագրական ընկերության» ծրագրերում։ Ընկերությունն այդ ծրագրերն իրագործելու նպատակով ստեղծել է իր մասնագետները Իրկուտսկում, Քիվիխում, Օրենբուրգում և այլուր։ Բարեբախտաբար այն ղեկավարել են բանիմաց ու լրջմիտ մտավորականներ, որոնք իրենց գործունեությանը նպաստել են գիտական մտքի առաջխաղացմանը։ Ընկերության կազմում ստեղծվել է հասուկ ազգագրական բաժին, ուր լայն գործունեություն են ծավալել ժամանակի հայտնի գիտնականներ, ակադեմիկոսներ Բերրը, Կավիլինը, Նադեժդինը և ուրիշներ։ Ընկերության ղեկավարներն իրենց շուրջն են համախմբել առաջադեմ գաղափարներով զինված ռուս և այլազգի մտավորական գործիչների, որոնք յուրացնելով ընկերության մշակած ծրագրերը՝ ձեռնամուխ են եղել իրենց ժողովուրդների մշակութային արժեքների վերահանման խնդիրներին։ Մտախիչ ծանոթանալով ընկերության գործունեությանը՝ Մ. Միանսարյանցը ևս դառնում է ընկերության անդամ և իր գործուն մասնակցությամբ արձագանքում նրանց ծրագրերին։ Քաջ գիտակցելով աշխարհով մեկ ցրված հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, մշակութային խնդիրներին մեթոդաբան դժվարությունները՝ Մ. Միանսարյանցը յուրատիպ ուղիներ է որոնում հայ ժողովրդի տարանջատ հատվածների միասնության, համախմբվածության գործընթացի ձև ստորման, նրա բազմաճյուղ ու բազմաբովանդակ մշակութային արժեքները ի մի բերելու ուղղությամբ։ Նրա կազմած վերոհիշյալ հարցաբանը հենց այդ նպատակն է հետապնդում։

Մ. Միանսարյանցը գիտակցում է նյութերի առանձին ժողովածուներով հրատարակելու անհրաժեշտությունը և միաժամանակ այն իրականացնելու դժվարությունները։ Նկատի ունենալով, որ ազգային մշակութային խնդիրներին արձագանքելու, ազգային մտավոր կյանքին ուղղություն տալու մենաշնորհը մեծ մասամբ տրված է պարբերական մամուլի հոգածությանը՝ Մ. Միանսարյանցը թղթակից բանահավաքներից կողմնորոշելու, օգնելու նպատակով հուշում է նրանց համապատասխան խմբագրությունների հասցեներն ու պարբերականների անվանումները։ Առաջադիր խնդիրները իրագործելու նպատակով Միանսարյանցն իր շուրջն է համախմբել որոշակի մասնագիտական կազմ ունեցող մտավորականների։

Նկատի ունենալով իր նախածեռնած գործի կարևորությունն ու հրատարակությունը՝ Մ. Միանսարյանցը նպատակահարմար է գտնում նաև հայոց կաթողիկոսի ոչ միայն մասնակցությունն այդ գործին, այլև այն գլխավորելու անհրաժեշտությունը։ Մ. Միանսարյանցի սկսած գործն ունեցել է իր շարունակությունը։ 19-րդ դարի 70-80-ական թվականներից սկսած մշակութային արժեքների հավաքման

գործը մասնագիտական մակարդակի վրա դնելու նպատակով լույս են տեսել մի շարք հարցարաններ: 1884 թ. Ա. Երիցյանը կազմել և հրատարակել է ազգագրական նյութերի հավաքման ուղեցույցը, 1887-ին Գ. Խալաթյանը՝ «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորույթաւորների» հարցարանը, 1946 թ. Ստ. Լիսիցյանը՝ «Ազգագրական հարցարանը»:

Նկատի ունենալով, որ Մ. Արամսարյանցի հարցարան-ծրագիրը ունի մշակութաբանական, մատենագիտական, աղբյուրագիտական հույժ կարևոր արժեք և ցարդ վրիպել է ուշադրությունից, այն ներկայացնում ենք ամբողջությամբ:

*Ս. Ա. Վարդանյան*

«Ա. Որքան հոգևոր վիճակ կայ թէ բուն հայոց, և թէ հայ կառօյիկների, բոլոր տիեզերքումը, վիճակների տարածութիւնը (զլխատոր քաղաքները և սահմանը), վիճակատորի նստելու տեղը, նոքա իրատարութիւնը, ռոճիկը և սպարտառի աղբիւրքը, ուր տեղ եւ ոքքան եկեղեցի կայ, քահանաների եւ վարդապետների թիւը, նոցա ապրտառի աղբիւրքը, վաճօրէից եւ եկեղեցեայց ստորագրութիւնը եւ որպիսի դրութեան մէջ են, նոցա կառավարութիւնը, առանձին պարսպմունքը:

Բ. Բոլոր տիեզերքումը ո՞ր տեղ, ո՞ր քաղաքում եւ գիւղում ոքքան հայ գերդաստան կայ, ոքքան արու եւ էգ, նոցա գլխատոր պարսպմունքը, առեւտորը, ապրտառը, զանազան հարկատարութիւնքը, ինչ օրէնքով են կառավարվում, կենցաղաւարտութիւնը, տարեկան եկամտառը, որպիս յարաբերութիւն ունին թէ կառավարութեան եւ թէ նոյն տեղերի միւս ազգերի հետ, ուղղութիւնը, երկրի օդի քարեխառնութիւնը, ամառուայ, աշնան, ձմեռան և զարման երկարատեւութիւնը եւ նոցա ցրտի եւ տաքի սաստիկութիւնը Թէմիոյի կամ ֆարսիւտեան ջերմաչափի վերայ, այն ժողովրդի լեզուն եւ նոցա օրինակները, յայսինքն տեղական ռամկական հայ լեզուով գրած մի առակ, կամ որ եւ իջէ խօսակցութիւն: Ժողովրդի աստածքը, տեղական բառերը, երգերը, խաղալիքը, հագուառը եւ գէնքի հետ վարտելը կը սիրեն թէ ոչ. եւ ինչ պատճառաւ, ինչպէս են իրեանց ժամանակը անցուցանում տանը, հասարակութեան մէջ, տեղական կառավարութեան հետ որպիսի հարաբերութիւն ունին: Ինչ յարգանք ունին կառավարութեան առջեւ եւ ինչ է պատճառն, եւ այլն:

Գ. Մանրամասն ստորագրութիւն բոլոր ազգային հասարակաց եւ մասնաւոր ուսումնարանների, վանքերի, քաղաքների եւ գիւղօրէից, եքք է հիմնած, ով է հիմնադիրը, ուր տեղ կայ տպած այդ վարժարանների ստորագրութիւնը, ոքքան դասատուն կայ, ինչ են ուսուցանում եւ ոքքան ամենայն դասատունում, աշակերտաց թիւը, նոցա հասակը, որպիսի ծնողաց զավակունք են, նոցա ունեւորութիւնը, ինչ սկզբունքներով են սովորում, հեղինակների անունները, գրքի մեծութիւնը եւ ճակատագիրը, արժողութիւնը, վերատեսուչների թիւը, ով եւ որ տեղ է իւր ուսումն ստացել, ինչ հեղինակութիւն ունի տպած, նոցա ռոճիկը, ոքքան ժամ է պարսպում տարին, վարժարանի հարստութիւնը, գրատան ստորագրութիւնը, ինչ կարգաւ են ստանում կարդալու գրեանք աշակերտը եւ վարժապետները, ուսումնարանների տան կամ վարժատան շինուածոց մանրամասն ստորագրութիւնը եւ հասցէքը (քաղաք, փողոց եւ տան համարը կամ տան տիրոջ անունը), աշակերտաց խաղալիքները, սենեակների օղը, մաքրութիւնը, օղաւիտիութիւնը եւ այլն, հաշուատեւութիւնը ուսումնարանի, տեղական ժողովրդի համակրութիւնը, ներգործութիւնը եւ ուսումնարանի գործերի մէջ խառնուիլը, եւ այլն:

Դ. Ո՞ր տեղ, ո՞ւմ մօտ ինչ ազգային ձեռագիրներ, հին դրամներ, զէնքեր եւ այլ հնութիւնք կան, նոցա ճիշտ ստորագրութիւնը, զանազան հին աւերակների, արձանների ստորագրութիւնքը»:

**С. А. ВАРДАНЯН- Культурологическое значение вопросника Микаэла Миансарянца.-** Армянский общественный, культурно-просветительный деятель и публицист XIX в. Микаэл Миансарянц в своем сборнике "Лира Армении" 1868 г. представил вопросник, в котором он попытался выявить многообразные стороны армянской культурной жизни. Несмотря на то, что вопросы представленные в вопроснике большей частью носили общий характер, в целом он способствовал составлению в дальнейшем узко-специализированных вопросников, которые сыграли важную роль в комплексном изучении армянской культуры.